
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀՀ-ՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

ԷՂԳԱՐ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ՀՀ պետական կառավարման համակարգը 1990-ական թվականներին չէր համապատասխանում վարչարարության միջազգային չափանիշներին: Դրա հիմնական պատճառն այն էր, որ Երրորդ հանրապետության քաղաքական համակարգի կայացման գործընթացն տեղի էր ունենում անկախ պետականության, ժողովրդավարական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության ձևավորմանը զուգահեռ: Չնայած քաղաքական և տնտեսական բարեփոխումներին՝ ՀՀ պետական կառավարման համակարգը շարունակում էր կրել խորհրդային տարիներից ժառանգություն մնացած կենտրոնացված կառավարման միակենտրոն համակարգի կնիքը: Ինչ խոսք, դա բացասաբար էր անդրադառնում պետական կառավարման համակարգի արդյունավետության վրա: Ժողովրդավարական քաղաքական վարչակարգի և «լավ կառավարում» ունենալու համար նախ և առաջ անհրաժեշտ էր բարեփոխումներ կատարել վարչարարական ենթակառուցվածքների, հանրային ֆինանսների և կառավարման ոլորտներում: Նախկինում գոյություն ունեցած կառավարման ձևերն այլևս կիրառելի չէին ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու համար: Հայաստանում սկսվում է նոր գործընթաց՝ «լավ կառավարման» համակարգի, զարգացած տնտեսական ենթակառուցվածքների, ինչպես նաև հանրային ծառայությունների որակի և արդյունավետության բարելավման ուղղություններով: Դրանք պետք է լիովին համապատասխանեցվեն միջազգային չափանիշներին:

Այսօր տնտեսության արդիականացման գործում խիստ կարևորվում է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը¹: Շնորհիվ տեղեկատվական տեխնոլոգիաների՝ ներդրվում է արտադրության նոր եղանակ, որը տարածվում է աշխատանքի բնույթի խորքային փոխակերպումների, սեփականության հարաբերությունների, սոցիալական կառուցվածքի և հասարակական կյանքի մնացած բոլոր ենթահամակարգերում տեղի ունեցող փոփոխությունների վրա: XXI դարն իրավացիորեն անվանում են տեղեկատվական,

¹ Տե՛ս **Бачило И. Л.** Государственное управление и «Electronic Government» («Электронное правительство») // "Информационные ресурсы России", 2007, № 6, էջ 10, **Grafton, С.** (2006 Fall) Book Review: Implementing and Managing eGovernment: An International Text. // "Social Science Computer Review". 2006. Т. 24, № 3, էջ 389-391, **Данчул А. Н.** Ключ E-Government – Ситуационные центры // "Государственная служба", 2010, № 5, էջ 60-65, **Киньякин А. А. Матвеевков Д. О.** Government Relations как форма общественно-политической и бизнес-коммуникации: к определению понятий // "Вестник Российского университета дружбы народов". Политология. 2009, № 1, էջ 37-47:

քանի որ այն դառնում է մարդկության գլխավոր ռազմավարական ռեսուրսներից մեկը՝ փոխարինելով մարդկության ավանդական ձևերին:

Քանի որ տեղեկատվական ռեսուրսները վերածվում են երկրի գիտատեխնիկական և սոցիալ-տնտեսական զարգացման որոշիչ գործոնի, ուստի յուրաքանչյուր պետության առջև ծառանում է կարևորագույն քաղաքական մի հիմնախնդիր՝ ապահովել երկրի՝ համաշխարհային մակարդակով մրցունակությունը: Ձևավորվող տեղեկատվական հասարակությունում աշխարհի առաջատար երկրները ձգտում են իրենց համար ապահովել առաջատար դիրքեր, որի համար էլ ստեղծվում են կառավարման էլեկտրոնային համակարգեր:

Տվյալ ոլորտին վերաբերող մի շարք իրավական ակտեր, տեսական վերլուծություններ, ազգային անվտանգության² և տեղեկատվական անվտանգության ռազմավարական փաստաթղթերն³ էլ ավելի են կարևորում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման անհրաժեշտությունն ու արդյունավետությունը: Չնայած այս ամենին, այնուամենայնիվ ՀՀ-ում էլեկտրոնային կառավարման համակարգի կայացման ուղղությամբ աշխատանքները սակավաթիվ են, իսկ առկա վերլուծություններն⁴ էլ հիմնականում վերաբերում են տեղեկատվական հասարակության կայացման նախադրյալներին:

Համակարգիչների դերը կրկնապատկվում է յուրաքանչյուր տասնութ ամիսը մեկ: Որոշ հեղինակներ տեղեկատվական դարաշրջանի հիմնական ռեսուրս են համարում ոչ թե գիտելիքը կամ մարդկային կապիտալը, այլ տեղեկատվությունը: Տեղեկատվական հեղափոխությունը փոխել է աշխատանքային գործունեության մեթոդները: Տեղեկատվական հասարակությունը⁵ կառուցվածքային իմաստով քաղաքական համակարգի մյուս տարրերից տարբերվում է նրանով, որ իշխանության օրինականացումը հիմնված է ոչ թե հարկադրանքի, այլ մշակութային արժեքների վրա: Այսինքն՝ հասարակությունը յուրացնում է հասարակական կարծիքին ենթարկվելու նորմերի անբողջությունը: Հասարակական կարգը կայուն վիճակում քիչ թե շատ երկար ժամանակով պահպանելու գրավական է դառնում բարոյականության և կարգուկանոնի առկայությունը: Ոչ մի ընտրյալ

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», Եր., 2007:

³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգ, 26 հունիսի, 2009 թվականի ՆԿ-97-Ն»:

⁴ Տե՛ս **Հ. Ս. Քոթանջյան**, Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ, Եր., 2009, **Հ. Ս. Հակոբյան**, Տեղեկատվական հասարակության կայացումը Հայաստանի Հանրապետությունում, «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասն. քաղ. գիտ. թեկն., Եր., 2011:

⁵ Տե՛ս **Кулакова Т. А.** Government Relations в процессе принятия политических решений // "Политическая экспертиза: ПОЛИТЭКС", 2005, № 2, էջ 226-237, **Orr N.** Coins - e-government becomes reality // BT Technology Journal. 2000, T. 18, № 2, էջ 100-106, **Солодов В. В.** E-Government и борьба с коррупцией // "Вестник Московского университета". Серия 21: Управление (государство и общество). 2006, № 1, էջ 47-70, **Schultz David.** Administrative law and performance reform of government agencies in communist and post-communist states // "Государственное управление". Электронный вестник. 2009, № 18, էջ 11, **Шустова М. С.** E-Government и борьба с коррупцией: новые вызовы информационного общества // "Альманах современной науки и образования", 2011, № 5, էջ 25-27:

չի կարող պահպանել կառավարման լծակները, եթե չի համապատասխանում սահմանված մշակութային նորմերին կամ չի առաջարկում իր նորմերը, որոնք ընդունելի կլինեն մեծամասնության կողմից⁶:

Տեղեկատվության ազատությունը պետական կառավարման համակարգի հրապարակայնության ապահովման հիմնական բաղադրիչներից մեկն է: Դեռևս 2003 թվականին ընդունված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը իշխանությունների առջև դրեց աշխատանքի հրապարակայնությունը ապահովելու ձևերի մասին պահանջը⁷, որոնցից մեկն էլ էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը և կիրառումն է թե՛ պետական մարմինների աշխատանքում և թե՛ իշխանություն-հանրություն փոխհարաբերություններում: Էլեկտրոնային կառավարման համակարգի ներմուծումը գերատեսչությունների ամենօրյա աշխատանքում, նոր գործիքների և տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունների կիրառումն այսօր արդեն կարող են ամենաարդյունավետ խթանը դառնալ իշխանությունների թափանցիկ և հրապարակային աշխատանքի համար:

Ներկայումս գոյություն ունեն «էլեկտրոնային կառավարում» եզրույթի բազմաթիվ սահմանումներ, սակայն առավել ընդհանուր ձևով այն կարելի է բնութագրել որպես «պետական ծառայությունների մատուցման գործընթացի ավտոմատացում»⁸: Էլեկտրոնային կառավարման համակարգը պետական ծառայությունների տրամադրման գործընթացի ավտոմատացված տարբերակն է⁹:

Պետական կառավարման նոր ձևերն այսօր ներկայացվում են «E-government»-ի երեք՝ ամերիկյան, ռուսական և սինգապուրյան մոդելների համեմատական վերլուծության հիման վրա: ՏՏ կիրառումը հսկայական առավելություն ունի պետական կառավարման ավանդական ձևերի համեմատ: Այս կապակցությամբ տեսական գրականությունում ակտիվորեն քննարկվում է «E-government»-ի հիմնախնդիրը¹⁰:

Այսօր աշխարհի զարգացած բոլոր երկրներում կառավարման էլեկտրոնային ձևը ներդրվել ու զարգացման բարձր տեմպեր է ապահովում: Օրինակ՝ Ֆրանսիայի կառավարությունը էլեկտրոնային կառավարման ներդրումից հետո տնտեսել է ավելի քան 10 մլրդ եվրո: Այստեղ էլեկտրոնային կառավարման պլանը՝ «Թվային Ֆրանսիա 2012», սկսել է իրականացվել 2008 թ. հոկտեմբերից, սակայն պետական պորտալը, որտեղ Ֆրանսիայի քաղաքացիները կարող են ստանալ պետական ծառայություններ, սկսել է զարգանալ դեռևս 10 տարի առաջ: ԱՄՆ-ում էլեկտրոնային կառավարման ստեղծումն ընթացել է «կառավարությունը ենթարկել քաղաքացիներին» կարգախոսի ներքո և գործում է 1993 թ.-ի Սպիտակ

⁶ Տե՛ս **Берн Э.** Лидер и группа. Екатеринбург, 2001, էջ 6-7:

⁷ Տե՛ս «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2003 թ. սեպտեմբեր 23-ին:

⁸ **Ա. Մինասյան**, Էլեկտրոնային կառավարման զարգացման հեռանկարները ՀՀ-ում, «Ֆինանսներ և էկոնոմիկա», № 1, հունվար, 2011:

⁹ Տե՛ս **Погосян Г. А.** Армянское общество в трансформации. Ер., 2003, էջ 41:

¹⁰ Տե՛ս **Յ. Սուքիասյան**, Տեղեկատվական հասարակություն. Էլեկտրոնային կառավարություն և էլեկտրոնային կառավարում, «21-րդ դար», թիվ 1 (23), 2009:

տան կայքէջի ստեղծումով: ԱՄՆ-ը համարվում է այս ոլորտի առաջատարներից մեկը:

Էլեկտրոնային կառավարման մոդելը բավական բարդ է, քանի որ ներառում է փոխհարաբերությունների մի ամբողջական համակարգ՝ մի կողմից պետությունը, մյուս կողմից՝ քաղաքացիները, իրավաբանական անձինք և քաղժառանգությունները: Տարբեր երկրներում ներդրված էլեկտրոնային կառավարման համակարգերը կարող են տարբեր լինել:

Էլեկտրոնային կառավարման միջոցները համարվում են առավել արդիական այն դեպքում, երբ դրանք նախատեսում են քաղաքացիների կողմից գործարքներ իրականացնելու այլընտրանքային հնարավորություններ և ապահովում են մատչելի և նպատակահարմար կապի միջոց (ինտերֆեյս) օտագործողի համար¹¹:

Որպես տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանի հրամայական՝ ՀՀ կառավարությունը, հիմք ընդունելով ՀՀ նախագահի նախընտրական ծրագիրը, նախաձեռնեց միջազգային լավագույն չափորոշիչներին համապատասխան էլեկտրոնային կառավարման լիարժեք ծրագրի ներդրումը կառավարության համակարգ¹²:

ՀՀ-ում էլեկտրոնային կառավարման ներդրման աշխատանքները տեսականորեն սկսվել են դեռևս 2008 թ.-ից, սակայն միայն 2010 թ. տարեկազմին է ՀՀ կառավարությունը հաստատել 2010-12 թթ. համար «ՀՀ-ում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը»¹³, որը, ըստ կառավարության բնորոշման, ՀՀ-ում համացանցի և էլեկտրոնային ծառայությունների մասսայականացման ինքնատիպ «ճանապարհային քարտեզ է»: Նախատեսվում էր այդ տարիների ընթացքում ՀՀ ողջ տարածքում՝ ներառյալ գյուղական համայնքները, անցկացնել 100 մբ/վ հզորությամբ «հաջորդ սերնդի լայնաշերտ ցանց»¹⁴: Այսօր այդ գործընթացն իրականացման փուլում է:

ՀՀ վարչապետի նախագահությամբ պաշտոնապես հիմնվել է ՀՀ էլեկտրոնային կառավարման խորհուրդ, և ծրագրի հիմնական 4 ուղղություններով ստեղծվել են պատասխանատու մարմիններ¹⁵:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ-ում արդեն բավականաչափ քայլեր ձեռնարկվել են էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ, և հետագայում դրանց հետևողական իրականացումը մեր հանրապետությունում պետական ծառայությունների մատուցման գործընթացի ավտոմատացման ամուր հիմքեր կստեղծի:

Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը Հայաստանում, ինչպես մյուս երկրներում, ժամանակի հանրային պահանջ էր: ՀՀ քաղաքացիները և մասնավոր կազմակերպություններն արդեն զգում էին ՀՀ պետական մարմինների կողմից տրամադրվող ծառայությունների մա-

¹¹ Տե՛ս **Мовсесян А.** Государственное управление посредством информационных систем // "Экономист", 1998, № 8:

¹² Տե՛ս ՀՀ նախագահի նախընտրական ծրագիր, Եր., 2008:

¹³ Տե՛ս Հավելված ՀՀ կառավարության 2010 թ. փետրվարի 25-ի նիստի № 7 արձանագրային որոշման:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Տե՛ս նույն տեղը:

տուցման հին քաղաքականության բացասական կողմերը և ակնկալում ծառայությունների մատուցման որակի բարձրացում, մատչելիություն, արդյունավետություն, մրցունակության ընդլայնում՝ ՏՏ լուծումների միջոցով: Ընդհանրապես, էլեկտրոնային կառավարման համակարգի հիմնարար առանձնահատկությունը նրա հասանելի լինելն է յուրաքանչյուրին՝ անկախ ժամանակից և տարածությունից: Այն պետք է ուղղակի և բաց երկխոսություն ապահովի քաղաքացու և պետության միջև՝ մոտեցնելով քաղաքացուն պետությանն ու պետական պաշտոնյային՝ միաժամանակ նվազեցնելով սուբյեկտիվ գործոնը: Դա քաղաքացու և պետական պաշտոնյայի չանձնավորված փոխհարաբերություն է՝ լուրջ վերահսկողությամբ և քաղաքացու կողմից այս ընթացակարգերին հետևելու լայն հնարավորությամբ: Էլեկտրոնային կառավարման նվազագույն արդյունքը կոռուպցիայի և կաշառակերության նվազումն է, իսկ ցանկալին՝ պետական կառավարման արդյունավետության բարձրացումը, որի նպատակը հետևյալ չափանիշներին հասնելն է.

- կառավարության գործունեության թափանցիկություն,
- որոշումների կայացման արագություն և արդյունավետություն,
- պետական ծառայողների աշխատանքի բարձր արդյունավետություն,
- ցածր կոռուպցիոն ռիսկեր:

Մի քանի տարի է, ինչ Հայաստանում ներդրվել և այժմ էլ շարունակում է զարգանալ էլեկտրոնային կառավարման ոլորտը: Վերոնշյալ նպատակներին հասնելու համար աշխատանքների սկզբնական փուլում սահմանվեցին առաջնային խնդիրներ և կատարվեցին մի շարք միջոցառումներ՝ ժամանակի և ծախսերի խնայողություն, կառավարման գործընթացին քաղաքացիների անմիջական մասնակցության ապահովում և այլն: Նշված խնդիրների լուծման համար ստեղծվեց պետական պորտալ՝ գործիք, որի միջոցով քաղաքացիները, կազմակերպությունները և պետական մարմինները այսուհետ հնարավորություն կունենան ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն և ծառայություն՝ անկախ այն բանից, թե պետական որ գերատեսչությունն է մատուցում այս կամ այն ծառայությունը: Ծառայություններ տրամադրող պետական յուրաքանչյուր մարմին պետք է (կարող է) ունենա պետական պորտալի անբաժանելի մաս կազմող իր ոլորտային պորտալը: Էլեկտրոնային կառավարման գործունեության համար անհրաժեշտ պայման է նաև մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվավերլուծական, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգերի ստեղծումը: Իսկ էլեկտրոնային ձևով ներկայացվող փաստաթղթերում առկա տեղեկատվության՝ անթույլատրելի փոփոխությունների բացառման, ինչպես նաև անձի ճանաչման համար ներդրվեց էլեկտրոնային թվային ստորագրությունը: 2008 թվականից պետական կառավարման մարմիններում աստիճանաբար ներդրվեց Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը (տես նկար 1): Մինչ այդ Հայաստանում կատարվում էր ավանդական թղթային փաստաթղթաշրջանառություն, որը պահանջում էր մարդկային և նյութական հսկայական ռեսուրսներ: Այնինչ փաստաթղթաշրջանառության ծավալների մեծացման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ներկա փուլում ՀՀ-ում էլեկտ-

րոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրումը և զարգացումը պարզապես անհրաժեշտ է: Այսօր Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը հաջողությամբ կիրառվում է 35 պետական մարմիններում, որի շնորհիվ ապահովվում է արդյունավետ և վերահսկելի աշխատանք՝ միաժամանակ նվազեցնելով վարչական ծախսերը: Օրինակ, եթե պետական մարմինները 2009 թվականին ծախսել էին 95 տոննա թուղթ՝ 67 մլն դրամ արժողությամբ, ապա 2010 թվականին՝ 33 տոննա պակաս՝ խնայելով շուրջ 20 մլն դրամ: Իսկ եթե հաշվի առնենք, որ 2010 թվականին մուտքագրված փաստաթղթերի քանակն ավելացել է շուրջ 30 տոկոսով, ապա խնայողությունն ավելի շատ է: Համակարգի ներդրման կարևորագույն արդյունքներից մեկը կատարողական կարգապահության բարձրացումն է, քանի որ ավտոմատացված կերպով վերահսկվում են կատարման ժամկետը և գործընթացը:


Նշենք նաև, որ 2013 թ. հունվարի 1-ից բոլոր գործատուները սկսել են ձեռք բերել նույնականացման քարտ և էլեկտրոնային ստորագրություն՝ էլեկտրոնային եղանակով եկամտահարկի հաշվետվությունները ներկայացնելու համար՝ համաձայն «Եկամտահարկի մասին» նոր օրենքի¹⁶:

Այսպիսով, եթե ներկայացնելու լինենք էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրման առավելությունները, կարող ենք ասել, որ դրա շնորհիվ ապահովվում է.

- կատարողական ժամկետների կրճատում,
- փաստաթղթային աշխատանքի արդյունավետության բարձրացում,
- տեղեկատվության փոխանցման ժամանակահատվածի կրճատում,
- ծախսերի կրճատում ավելորդ ռեսուրսների տնտեսման միջոցով,
- անցում թղթային փաստաթղթաշրջանառությունից էլեկտրոնայինի:

Նկար 1

էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության գործընթացը¹⁷



Հայաստանում էլեկտրոնային կառավարման ներդրումը, չնայած կարճատև գործունեությանը, բավականին մեծ առաջընթաց է երկրի համար: Այն ոչ միայն կրճատում է բյուրոկրատական քաշքշուկների ծավալը, այլև հնարավորություն է տալիս ինտեգրվելու քաղաքակիրթ աշխարհին, միջազգային հանրության առջև որպես ժողովրդավար երկիր ներկայանալու, ապացուցելու, որ Հայաստանը ոչնչով ետ չի մնում եվրոպական երկրներից: Հա-

¹⁶ Տե՛ս http://www.ekeng.am/?page_id=73&lang=hy
¹⁷ Տե՛ս <http://www.e-gov.am/gov-decrees/calendar/2013/02/>

յաստանում էլեկտրոնային կառավարման համակարգի ներմուծման և զարգացման կարճատև ժամանակահատվածի ուսումնասիրությունից, լիովին տեսանելի է դառնում ոլորտում գրանցված հաջողությունները և շոշափելի առաջընթացը: Այնուամենայնիվ, կցանկանայինք համակարգն ավելի զարգացած տեսնել, ուստի գտնում ենք, որ էլեկտրոնային կառավարման համակարգի բարեփոխումներում պետք է հետագայում ուշադրություն դարձնել հետևյալ առաջնահերթություններին.

1. Համացանցին հանրային հասանելիության հավասար հնարավորությունների ապահովում: Էլեկտրոնային կառավարության կայքէջի առկայությունը դեռ չի ենթադրում դրա հասանելիության առկայություն. այլ կերպ ասած՝ երաշխավորված չէ բոլորի՝ այդ թվում աղքատ, ՏՏ գործիքներին չտիրապետող բնակչության մասնակցությունը: Այս առումով բավական է միայն նշել Հայաստանի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձի չափն ընդամենը 35 հազար դրամ է, իսկ անսահմանափակ ու գերարագ համացանցի ամսական վճարը 15.000 դրամ*: Թեև վերջին տարիներին ինտերնետ հասանելիությունը բավականին մեծացել է՝ 2010 թ. գրանցելով հսկայական աճ՝ նախորդ տարվա համեմատ հասնելով 47.1 %-ի (այսօր այս ցուցանիշն էլ ավելի բարձր է, տե՛ս աղյուսակ 1-ը՝ ինտերնետ ծառայություններից օգտվողների թիվը՝ ըստ տարեթվերի), այնուամենայնիվ այն դեռևս ցածր մակարդակի է հատկապես մարզերում: Փաստորեն, վիրտուալ աշխարհում նույնպես ոմանք առավելություն ունեն մյուսների նկատմամբ:

Աղյուսակ 1

Ինտերնետ ծառայություններից օգտվողների թիվը՝ ըստ տարեթվերի

Տարի	Օգտագործողներ	Բնակչություն	% (տոկոսով)
2000	30,000	3,002,594	0.1 %
2001	40,000	3,000,164	0.5 %
2006	161,000	2,950,060	5.5 %
2008	172,800	2,968,586	5.8 %
2009	191,000	2,967,004	6.4 %
2010	1,396,550	2,966,802	47.1 %

2. Պետական և քաղաքացիական ծառայողների համակարգչային գրագիտության աստիճանը դեռևս շարունակում է մնալ ոչ բավարար: Չնայած քաղաքացիական ծառայության մրցույթներում պարտադիր է համակարգչային գիտելիքների առկայությունը, սակայն շատերն աշխատանքի են ընդունվում ոչ բավարար գիտելիքներով: Չկա վերապատրաստության հստակ մեխանիզմ:

3. Պետական կառավարման համակարգի կողմից տեղեկատվության նկատմամբ վերահսկողությունը: Կառավարության և քաղաքացիների միջև երկկողմանի էլեկտրոնային կապում գերակա կարելի է համարել կառավարությանը, եթե հաշվի առնենք վերջինիս կողմից քաղաքացիների

* Տվյալներն՝ ըստ «UCOM» ընկերության:

մասին տեղեկատվության պաշարի ավելացման քաղաքականությունը, որով, ըստ որոշակի ուսումնասիրությունների, խախտվում է քաղաքացու անձնական գաղտնիությունը և կարող է նպաստել նոր ամբողջատիրական համակարգի ձևավորմանը: Այս առումով ուշագրավ է, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների «PATRIOT Act»-ը հետախուզության դաշնային բյուրոյին թույլ է տալիս, հեռախոսազանգերից ու ֆինանսական տվյալներից բացի, հետևել էլեկտրոնային նամակագրությանը, ընդ որում՝ առանց դատական օրդերի, և այս հանգամանքն ԱՄՆ իշխանությունները բացատրում են ահաբեկչության դեմ պայքարի հրամայականով:

4. Մեկ այլ կարևոր խնդիր է միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի ենթաբաղադրիչների և տեղեկատվական ակտիվների (պաշարների) անհրաժեշտ և բավարար մակարդակի տեղեկատվական անվտանգության ապահովումը: Տեղեկատվական անվտանգությունը բաժանվում է 3 հիմնական բաղադրիչների՝ տեղեկատվության գաղտնիություն, ամբողջականություն և հասանելիություն.

- տեղեկատվության գաղտնիությունը երաշխիք է, որ այն հասանելի է միայն համապատասխան լիազորություն ունեցողներին,
- տեղեկատվության ամբողջականությունը տեղեկատվության մշակման մեթոդների ճշտության և լիարժեքության ապահովումն է,
- տեղեկատվության հասանելիությունը երաշխիք է, որ արտոնագրված շահագործողն ունի հնարավորություն տեղեկատվության հասանելիության, երբ դա անհրաժեշտ է:

Քանի որ Հայաստանում մենք արդեն ունենք միասնական տեղեկատվական համակարգ, դրա առանձին բաղադրիչների խափանումների հետևանքով հնարավոր է ողջ համակարգի համակարգային ճգնաժամի առաջացում, որը կարող է մեծ վնաս հասցնել համակարգի առանձին բաղադրիչներին, դրանց բնականոն գործունեությանը: Տեղեկատվական անվտանգության միջադեպերը, առաջացման ռիսկերը և վնասների հավանականությունը լուրջ սպառնալիք են էլեկտրոնային կառավարման միասնական տեղեկատվական համակարգի բոլոր սուբյեկտների համար:

5. Առցանց ծառայությունների թվի ու որակի բարձրացում քաղաքացիների և մասնավոր ձեռնարկությունների կողմից էլեկտրոնային մասնակցության ավելացման համար: Նախարարությունների պորտալները թեև ունեն անհրաժեշտ հիմնարար գործիքներ՝ ընդհուպ էլեկտրոնային նամակ գրելու քաղաքացու իրավունքի ապահովումը, այդուամենայնիվ սահմանափակ են քաղաքացիական ներգրավման (ինչպիսին է քննարկումներին կամ համաժողովներին մասնակցությունը) և գերատեսչության կողմից քաղաքացու հետ շփվելու էլեկտրոնային ուղիների ապահովման տեսանկյունից:

6. էլեկտրոնային ծառայությունները օգտվելու համար հանրությանը ներգրավելու հարցում անհրաժեշտ է նաև բարձրացնել էլեկտրոնային կառավարման մասին հանրային գիտակցությունը, ինչպիսիք են, օրինակ՝ էլեկտրոնային կառավարման գրանցած արդյունքների մասին պարբերաբար միջանկյալ իրազեկման ծրագրերի իրականացումը, հաջողված օրինակների լուսաբանումը, ինչպես նաև ուսուցումներ և վերապատրաս-

տումներ անցկացնելը: Երբեմն քաղաքացիները էլեկտրոնային կառավարումը գնահատում են՝ ըստ ավանդական կառավարության մասին իրենց դիրքորոշումների: Այսպես, օրինակ՝ այն անհատները, ովքեր չեն վստահում ավանդական կառավարությանը, հիմնականում բացասաբար են տրամադրվում նաև էլեկտրոնային կառավարման նկատմամբ: Ուստի, նախ և առաջ պետք է բնակչության շրջանում բարձրացնել վստահությունը կառավարության նկատմամբ:

7. Նույնականացման քարտի (ID) ներդրումը նույնպես կլինի բարեփոխում, որի շնորհիվ կստանանք տվյալների էլեկտրոնային շտեմարան, որը կպարունակի անձի անհատական տվյալները: Նույնականացման քարտերը կփոխարինեն անձնագրերին և սոցիալական քարտերին: Քարտի ներդրումը նաև կբարձրացնի տվյալներ կրող անձի և նրա վերաբերյալ փաստաթղթային տվյալների համապատասխանության մակարդակը, կպարզեցվի և կավտոմատացվի անձի նույնականացման գործընթացը, կնվազեն անձը հաստատող փաստաթղթերի կեղծման հնարավորությունները, կպարզեցվի էլեկտրոնային ծառայություններից օգտվելու հնարավորությունը:

8. Եվ կարևորագույնը՝ անհրաժեշտ է պետության բազմակողմանի աջակցությունը: Որպեսզի համակարգը լավ աշխատի, նախ և առաջ անհրաժեշտ է պետական մարմինների ոչ ձևական բնույթ կրող ներգրավվածություն: Հեռահաղորդակցությունը, ինտերնետային ենթակառուցվածքները հնարավորինս զարգացնելու համար անհրաժեշտ է կամք, նախաձեռնողականություն, մշակել համակարգչային համընդհանուր հասանելիություն ապահովելու, ցածր գներով համակարգիչներ ներկրելու ծրագրերի հստակ քաղաքականություն և այլն:

Այսպիսով՝ ՀՀ կառավարությունը պետք է անի առավելագույնը, որպեսզի ունենա հանրային ֆինանսների, անձնակազմի և էլեկտրոնային կառավարման արդյունավետ գործող համակարգեր, իրականացվող և սպասվելիք բարեփոխումները կյանքի կոչվեն, ՀՀ կառավարման համակարգն էլ՝ ավելի համապատասխանի միջազգային չափորոշիչներին, որպեսզի մեր պետական կառավարման համակարգն ու քաղաքացիական ծառայության հետագա զարգացումը համապատասխանեն ձեռք բերված տնտեսական, սոցիալական և քաղաքական առաջընթացին:

ЭДГАР КАЛАНТАРЯН – Система электронного управления как гарант демократизации в РА. – Внедрение в систему государственного управления информационных и телекоммуникационных технологий не только желательно, но и необходимо. Эта система придаёт новое качество государственному управлению и услугам, предоставляемым государством. Информационно-технологическая революция последних десятилетий ведёт к новому информационному обществу или, иными словами, к обществу, основанному на знаниях (knowledge-based society). Информационная революция стала основой электронного управления. Его внедрение в Армении, как и в других странах, – веление времени и общественная потребность. Оно позволит нам интегрироваться в цивилизованный мир и создаст среду, где общение гражданина с чиновником будет сведено к минимуму. Это

снизит коррупционные риски, обеспечит доступность и высокое качество предоставляемых услуг, устранил бюрократические препоны. Однако развитию электронного управления препятствуют многие факторы. В частности, оно требует значительных вложений – серьезная проблема для развивающихся стран.

EDGAR KALANTARYAN – *Electronic Government System as a Guarantor of Democratization in the Republic of Armenia.* – In modern conditions, the introduction of the system of state management of information and communication technologies is not only desirable, but also necessary. This system brings a new quality of public administration and public services. The information technology revolution which has been occurring over the last decade leads to the development of humanity to the new information society, in other words, a society based on knowledge (knowledge-based society). The information revolution has become the basis for a revolution of electronic control. The introduction of such a system in the Republic of Armenia, as well as in other countries, as the demand of the times and social need, it is a significant and progressive event for the country. Due to the positive results of the implementation of an electronic control creates an opportunity to integrate into the civilized world. The aim of introducing such a system is to create an environment where it will be kept to a minimum citizen's communication with government officials and could potentially reduce the risks of corruption, while providing access to and quality of services, elimination of red tape, etc. However, it should be noted that there are numerous obstacles to the development of E-Government, among which are the following: in any country the use of electronic forms management requires rather large investments, which can be a serious problem, particularly for developing countries.